



Սայաթ Նովա

Թեգուիզ քու քաշը մարքրիտ տան

Էս դափիան չորս լեզվով է՝ վրացերեն, պարսկերեն, թաթարերեն և ադրբեջաներեն, հայերեն. Արութինի ասած է.

Էս ի՞նչ էլավ ինձ հիդ, տե՛ս, ի՞նչ իմ արի,
Դե վիզըդ ծուռ. գնա, տանեն դուս արած,
Խիլքըս տանուլ տըված լիդնուրթ իմ դառի,
Գըժված ման իմ գալի, բանեն դուս արած:

Քաղցր թութըս դառը լիդի շինեցի.
Յիս մի միխկ իմ արի՝ նշտար քաշեցի,
Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի.
Բաս էնդու համա իմ նանեն դուս արած:

Յիս բլբուլ իմ, վարթըս փակից ալալը.
Տե՛ս ի՞նչ արից հուրիգադա ջալալը
Կորցրիլ իմ ջավահիրը ու լալը,
Մա՛դան չունիս, Բադեշխանեն դուս արած:

Շա լաց էլա, վա՛յ կանչիցի անհաշիվ,
Էլ ի՞նչ օքուտ, ջան տուր, կինքըդ հա՛ մաշի,
Էս իմ դարդից թոխ վուր օշ օվ չը քաշի,
Օշ օվ չըլի սիրեկանեն դուս արած:

Ա՛րի, մի՛խկ իս, Սա՛յաթ Նովա միղանչող.
Ախպոր ճանփին կինքըս մատաղ ըլի թող.
Սըրան դաբուլ իմ արարիչ-ստիղծող,
Հոքիս չանիս դրախտիջանեն դուս արած: